Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ОРЛ

Д-рицуше шубмешр

I 9-5F25

Рим 3.м
1914.

891.99-82
421

ԾԻԼ

ԳՐԱԿԱՆ ԱԼՄԱՆԱԽ

Ի Գրքոյկ

«ЦИЛЪ»
(Отпрыскъ)
Литературный альманахъ
I. книжка.

891.99-82
Ծ-52

ԲԱԿՈՒ
տպարան «Վէրա» Եղբ. Կարապետեանների
Электро-тип. «Вѣра» Бр. Карапетянцъ
1914

„ԾԻԼ“

ԳՐԱԿԱՆ ԱԼՄԱՆԱԽ

ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ

ԳԻՆԸ 15 ԿՈՊԵԿ

ԽՄԲԱԳՐՈՒՄ Է ԱՅԴ ԳԻՐՔԸ

ԾԻԼԸ ԼՈՅՍ Է ՏԵՍՆԵԼՈՒ 2 ԱՄԻՍԸ ՄԻ ԱՆԳԱՄ

Խմբագրության հասցեն՝ Баку Биржевая 96 Г. Арзуманянцу. կամ Bacou (Russe, Caucase), Birjevaya 96 Hayk Arzoumaniantz

---

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ։

1. Նիւթերը պէտք է լինեն գրուած թերթի միայն մի երեսի վրայ և պարզ։

2. Նիւթերի կրճատելու և փոփոխելու իրաւունքը խմբագրութիւնս իրեն է վերապահում։

3. Կեղծանուն հետ պէտք է յայտնել նաև իսկական անուն-ազգանունը, ինչպէս և մանրամասն հասցէն։

4. Թարգմանութիւնների հետ պէտք է ուղարկել նաև բնագիրը։

5. Չտպուած նիւթերը յետ է ուղարկում հեղինակից ճամբածախը ստանալուց յետոյ։

ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐՆ ԵՆ՝

Ղարս.—Օր. Արշանուշ Փարսադեանց։
Կարին.—Հր. Համբարեան, Ֆրանսիական դարձարան
Մերս.—Իշխ. Հայրապետեան, Кавказская, магазинъ „Оборотъ“.

676

ԾԻԼ

ԳՐԱԿԱՆ ԱԼՄԱՆԱԽ

Ի. Գրքոյկ.

Редакція „ЦИЛЪ“
ТИФ
891.99-82
Ծ 52

«ЦИЛЪ»
(Отпрыскъ)
Литературный альманахъ
I. книжка.

ԲԱԳՈՒ
Էլէք.-տպարան «Վէրա» Եղբ. Կարապետեանների
Баку, электро-тип. «Вѣра» Бр. Карапетянцъ
1914

(4587

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկու խօսք

Մահու մեղեդիներ. (Բանաս.) Փ. Համզոյեան

Զայն տուր . . . . . Դ. Սարգսեան

Անծանօթուհին . . (Բան.) Ս. Առաքելեան

*** . . (Արձ. բան.) Ալ. Մատթէոսեան

Նէր անծանօթին (Բան.) Ռ. Հեզեան

*** (Բան.) Օր. Ան. Ծատ-եան

*** (») Հ. Հայկազունի

Ծովը . . . (Արձ. բան.) Ալ. Հայրապետեան

Սակայն Երանի (Բան.) Օր. Վարդուհի

Աղճի խայթոցը . . . . Հ. Արզումանեան

*** (Բան.) Ալ. Մաթ.

*** (») Գառն. Ղազարեան

Աղճի դատաստանը. թարգմ. Հ. Արզումանեան

*** (Բան.) Ի. Հայրապետեան

Սիրաս (») Հրանդ Համբարեան

*** (») Աւիսի

*** (») Օր. Արշանուշ

*** (») Ս. Վտարանդի

Ազնիւ Մարդը. թարգմ. Գիժ

*** (») Ժորժ-Արտուր

Գրախօսական-Դիտողութիւններ — Գրախօս Պօտ-Արկղ

73374-ԱԽ.

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Այս օրանից ձեռնարկում ենք «ԹԻԼ» գրական ալմանախի հրատարակութիւնը և աւելորդ չենք համարում մի երկու խօսքով բնորոշելու նրա անելիք գործը մեր պատանի-երիտասարդների շրջանում։

Ամենայն մի գործ իւր սկզբում հանդիպում է շատուշատ խոչնդոտների և նրա ճանապարհը լինում է դժուարին։ Շատ քիչ մարդիկ են գտնուում միան, երբ թեւաւորում են մի այդպիսի վեհ գործ բռնողներին, որոնք գնալով բայց տատանումներով, ճամբիսի կիսին՝ ջարդուած թեւերով վայր են դնում իրենց զէնքերը և աղաղակում—«Փառք յաղթուածներին»։ Բայց մենք, աչքի առաջ չունենալով այդ վհատուողական աղաղակներն ու յուսահատութիւնը, սկսում ենք մեր գործը մեզ նեցուկ ունենալով խրախուսական խօսքերն ու բարեկամական անկեղծ խորհուրդները և հրատարակում ենք «ԹԻԼ» գրական ալմանախը։

Մենք վառ յոյսերով սկսում ենք մի գործ, անյայտ ոյժերին առաջ քաշելու գործը, որոնք չեն վատահանում իրենց թոթովանքներն ուղղել մեր պարբերականներին, որովհետև այնտեղ ուշադրութիւն անգամ չեն դարձնում դրանց վրայ։

Ո՞վ է ծնել հանճար կամ թէ տաղանդ։

Նրանք էլ նախ թոթովել են և ապա սկսել իրենց մտքերի անսանձ թռիչքներն անել։

Այսօրւանից մենք հող ենք պատրաստում, մի պարարտ հող մեր ապագայ ծառերի համար և ցանում ենք այնտեղ սերմերը, այն վառ յոյսերով, որ մի օր, այդ սերմերը կծլեն, կոկոններ կ'արձակեն, վարդեր կբանան և դրանից յետոյ կ'մտնեն մի այլ շրջանի՝ ծառեր դառնալու շրջանի մէջ։

Այս օրւայ ծլերը մեր հաստատ համոզմունքներով վաղը կդառնան հաստատուն ծառեր, որ փոթորիկներն անգամ չեն կարող նրանց վայր գլորել, որովհետև մայր հողի կրծքում նրանք ամուր-ամուր արմատներ արձակած կլինեն։

Այսօրւանից մենք կատարում ենք մշակի դեր և հող ենք պատրաստում հատիկների համար։

Այդ հատիկները ծլեն, ճղներ արձակեն և իրենց հովանու տակ դապ արած՝ ճամբից յոգնած մարդկանց շաք անեն։

Մենք կ'ծլ'ացնենք սերմերը և նրանց կպահենք, կպահպանենք զանազան պատահարներից մի որոշ ժամանակ, ինչպէս թռչունը իւր ծաղուկներին, և յետոյ մենք նրանց պահ կտանք մէկիկ մէկիկ մեզնից հմուտ, մեզնից փորձւած պարտիզպաններին, որպէս զի նրանք մշակեն, ջրեն, փայեն-փայփայեն, որ ապագայի հաստատուն ծառերը դառնան։

«Ծիլ»-ը իւր էջերն անխտիր կերպով բաց է անում մեր բոլոր սկսնակ գրող պատանի-երիտասարդների համար։

Թող ներեն մեզ ընթերցող հասարակութիւնն ու մեր համեստ քննադարները մեր բոլոր աւել ու պակաս սխալների համար, որովհետև բոլոր գործերը սկսել են սխալով և ժամանակի ընթացքում միայն, անկեղծ բարեկամների խորհուրդներով ու նրանց բարոյական աջակցութեամբ ուղղել։ Մենք էլ ժամանակի ընթացքում կ'ուղղենք մեր բոլոր սխալները։

Խմբագրութիւն

ՄԱՀՈՒ ՄԵՂԵԳԻՆԵՐ

Կեա գիշեր է լո՛ւռ...
Աստղե՛ր, լուսին, հողմերն են անդո՛ռ
Անա շիրիմը երա՛զ օրերիս.
Այստե՛ղ շուտ, նայի՛ր, թաղել եմ բոլոր
Յոյզ ու երազը վաղամեռ արտիս...

Ո՞վ ծեծեց իմ դո՛ռը...
Ո՞վ ես դո՛ւ, օտա՛ր, հեռացի՛ր, գնա՛,
Սեռ քարն եմ տաշում, յոկում շիրիմիս.
Ինձ մի՛ խանգարիր, քո նամբով գնա
Թող մենակ ողբամ երազը կեանքի՛ս...

Մրրիկն է անձա՛յն...
Ա՛խ, դո՞ւ ես, անտուն, իմ ծաղիկ, իմ Սե՛ր,
Այդպես վտարուած ո՞րտեղից եւ ո՞ւր...
Այդ դո՞ւ ծեծեցիր իմ դուռը աւեր,
Վերադառնալու տենչով՝ բայց 'իզուր...

Անա իմ կայան...
Արդեն շիրիմ է դարձել նա անշուք.
Այստեղ թաղել եմ ե՛ւ յոյզ ե՛ւ տենչանք,
Երազուն արտի սերը արտմաշուկ
Ու մտորումնե՛ր եւ յոյս, անրջանք...

Ցոգնած եմ արդե՛ն...
Երկար կուել եմ, անվերջ պայքարել,
Վեհածին կեանքի, երա՛զ նամբեքում.
Ամեն, ամեն ինչ արդեն կորցրել
Չարդած հոգիս եմ դառնօրեն ողբում...

Ո՞ւր է իմ ճամբեն...
Կամարների տակ արեւս մարեց.
Կեանքիս փարոսը խաւարում հանգաւ.
Ու իմ առջեւս մի շիրիմ բացուեց,
Տեսիլի նման սահեց ու անցաւ...

Կես գիշեր է լո՛ւռ...
Աստղե՛ր, լուսին, հողմերն են անդորր
Սեւ քարն եմ տաշում, հոկում շիրիմիս.
—Այս քարի տակն եմ թաղել իմ բոլո՛ր
Յոյզ ու երազը վաղամեռ արտիս...

Փառանձեմ Համզոյեան

Բագու.

ՀԱՅԵՆ ՏՈՒՐ

I.

Մութ խաւար գիշեր էր...

Այս ու այն տեղից մերթ ընդ մերթ լսւում էին աքաղաղների կանչը և մեծ քաղաքի ազգաբնակչութիւնը յոգնած օրւայ վաստակից, հանգիստ էր առնում։

Որսաուզած իմ մտքերիս անյատակ ծովում՝ ես չէի կարողանում ազատել ինձ շրջապատող այն տսկալի, դժգոյն պատկերներից, որոնք մէկը միւսի հետևից կաշկանդել էին իմ հոգին... Ահա այդ ժամանակ երկնային գեղեցկութեամբ օծւած մի կանացի ուրւական կանգնեց իմ դէմ և լուռ ու անխօս, առանց իւր տեղից շարժուելու, անէծքի տարափ թափեց իմ գլխին...

Օ՜, այդ դու էիր...

Քո անշարժ ուրւականն էր այդ, որ կամենում էր վրէժխնդիր լինել ինձանից...

Այո՛, դու իրաւունք ունէիր ինձ հետ այդպէս վարւելու։

Չէ՞ որ ես քեզ սիրում էի և նոյնքան սիրում քեզանից...

Բայց աւա՜ղ....

Շուտով, շա՛տ շուտով չաղջախուեցին մեր սին երազները ու անվերջ տենչանքները։

Մի օր, երբ իմացայ, որ ինձնից ծածուկ մի ինչ որ պարոնի հետ թատրոն ես գնացել,

այն օրանից իմ մէջ եռաց չար նախանձն ու ասիացու կոպտութիւնը...

Քո երկնային գեղեցկութիւնը, քո աքանչելիութիւնն ու քո հոգու մաքրութիւնը այլ ևս ընկած էին իմ աչքից. և օրեցօր իմ մէջ մեռնում էր այն կրակոտ, այն անհուն սէրը, որ ազնիւ, անարատ սրտով տածում էի ես դէպի քեզ...

Սակայն այդ դեռ բաւական չէր...

Երբ ինձ յայտնեցին, որ դու համբուրել ես այդ նոյն պարոնի հետ և քեզ նկատել են ուրիշները—օ՜... այն րոպէին վրէժխնդիր սիրտս երկինք պացաւ և իմ ձեռքով քո աւանդած հոգին—ես այնտեղ տեսայ....

Մտածում էի... ատրճանակի շեշտակի մի հարուածով վերջ տալ քո կեանքին, և ինքս էլ հանգիստ սրտով հետևել քեզ...

Բայց դու ինձնից շուտ ընտրեցիր այդ ուղին քեզ համար...

Երբ իմ մէջ «փոփոխութիւն» նկատեցիր, երբ հարցերիդ բիրտ ու կոպիտ պատասխաններ էի տալիս, առանց սակայն իմանալու քեզանից, թէ ինչումն է կայանում գործը, այն ժամանակ դու այլևս անկարող էիր տանել խաբուած սիրոյ հետևանքը և թունաւորեցիր քեզ, մահուան մատնելով քո կեանքը։

II.

Մութ խաւար գիշերը լուսացաւ...

Այլ ևս իմ շուրջը չեն վխտում այն սառն, մեռելային դէպքերն ու սոսկալի պատկերները, որոնք իրենց յուժկու արտաքինով մի տեսակ

մահու դող և սարսուռ են ներշնչում մարմնիս մէջ...

Զկայ և քո ուրուականը։

Եւ դու անէծք չես կարդում իմ գլխին, որ ես անարդար, անխիղճ վարուեցի քեզ հետ և չար կարծիք ունեցա դէպի քեզ...

Ոչ...

Դու չես դատաճանել իմ սէրը...

Ո՛չ ես եմ մտադիր եղել քո կեանքին վերջ տալու և ո՛չ էլ դու ես իմ մէջ փոփոխութիւն նկատել, որ իբր, թէ ես հաստատ համոզուած եմ, որ դու սիրում ես մէկ ուրիշին և այդպիսով թունաւորել ես քեզ...

Ինձ երբէք մարդիկ չեն պատմել, որ դու թատրոնումն ես եղել մի ուրիշ մարդու հետ և կամ համբուրել ես նրա հետ...

Երբէք, երբէք ինձ չեն պատմել, որ քո շրթունքներիդ այն ցօղանման, քաղցր հիւթը ծծել է մէկ ուրիշը...

Ո՛չ... ո՛չ...

Այդ բոլորը ես տեսել եմ երազիս մէջ, իմ քնած ժամանակ... Այդ բոլորը ինձ թւացել է, այո՛, միմիայն թւացել, այն էլ երազիս մեջ... Իսկ կեանքում, իրական կեանքում ոչինչ տեղի չէ ունեցել մեր մէջ...

Սակայն աւա՜ղ.....

Այժմ մենք հեռու ենք միմիանցից և մեր անդարձ կեանքի օրերն ու յուշերն միայն դալիս...

Թռչում, սլանում եմ քեզ մօտ, բայց չգիտեմ, թէ ո՞ւր ես գտնում դու...

Զայն տուր իմ հոգու հատոր... Իմ կրծքի անթառամ ծաղիկ...

Զայն տուր և թող քո տաք շնչով կազդուրուի ջարդուած մարմինս և նորից ալանամ դէպ ձեզ, քո կրծքին փարուելու քո կարօտն առնելու...

Թէկուզ հարիւր հազար մարդիկ նախանձով լցուած՝ ամեն կերպ աշխատեն խոչնդոտ հանդիսանալ մեր սիրոյն, խանգարէն ու ջաղջախէն մեր երջանկութիւնը—թէկուզ պատմեն ինձ քո կեանքից տոսկալի էպիզոդներ, ես դարձեալ վրհատուողը չեմ...

Ես սիրում եմ քեզ և ճանաչում քո հոգուարիութիւնն ու մաքրութիւնը...

Զայն տուր, իմ հեռաւոր ընկեր, իմ միտք, իմ յիշողութիւն...

Զայն տուր և թող քո ձայնով ես ապրեմ ընդմիշտ...

Զայն տուր իմ հոգեակ—ես սպասում եմ...

Դու իմն ես, իմը...

Քեզ եմ սպասում...

Դ. Սարգսեան

Բագու

ԱՆԾԱՆՕԹՈՒՀԻՆ

Լռեց քաղաքի աղմուկը տաղտուկ,
Դաշտերում իջաւ շղարշը մութի.
Իսկ ինձ մօտեցաւ կամաց ու գաղտուկ
Ու լուռ պատմեցիր սիրը քո սրտի:

Ես չեի տեսել դեմքը քո պատիր
Կեանքիս օրերում չեի հանդիպել.
—Անծանօթ աղջիկ, դու ինձ մի՛ խաբիր
Երբէք քեզ համար ես չեմ աղօթել:

Իրիկունը ինձ հանգիստ է բերում,
Քնած դաշտերը զգում են հոգիս.
Էլի ինձ համար երազ ես հիւսում,
Սուտ երազներից յոգնել է հոգիս:

Դիշերն հոգեթով օրօրում է ինձ,
Թող հանգստանամ քնած դաշտերում.
Սուտ խօսքերով դու մի՛ խաբիր ինձ,
—Անծանօթ աղջիկ, քեզ չեմ հաւատում:

Սիմ. Առաքելեան

Դորպատ

*
* *

Մոլոր ու խելառ սարեր կանցնեմ ես մեն ու մենա՛կ...

Իմ ցաւոտ սիրտս հովերին կտամ անխօս ու լռիկ, որ հառաչանիս բոցերն անշեջ սիրտս չայրեն յաւերժ ու անվերջ...

Խրոխտ լեռների քամին թափառիկ թ՛ող խլէ ինձնից իմ հառաչանքը եւ հալածէ միշտ անտուն ու մենակ է՛ն անյայտներում...

Սարերից-սարե՛ր, վայրերից-վայրեր եւ անդնդախոր ձորերի միջին թո՛ղ որոտան միշտ, ուժգին զարնուեն քարերին վիաս, չքանան յաւ՛էս, որ էլ չպրկեն սիրտս վշտահա՛ր...

Եւ գո՛ւցէ հորեն էն անյայտներում երջանկութեան արեւը վարդագոյն լուս շառագունէ հորեկ գարունի հրքին շողերով, անուրաս կոյսի անմար կարոտով իմ այրուած սրտին ափոփանք տալով...

Եւ գուցէ մի օր, լուսաբեր գարնան վարդերից մէկին ես գրկեմ վերստին, իմ թափառ հոգեմ, անվերջ հեկեկամ, կարոտով հնջեմ սեգ սարերի լանջին արցունքէ վարդեր սեղմած իմ կրծքին...

Ալ. Մասթէոսեան

Բագու



ՆՈՒԷՐ ԱՆԾԱՆՕԹԻՆ

Սար ու հովին կտամ դարդըս,
Բուերի պէս կվայեմ.
Ա՜խ, անսէր եար, իմ էս սիրտըս
Ես ինչ անեմ, ո՞ւր տանեմ...
Դարմանը տուր, նա քեզ մօտ ա,
Քո սէրըդ ա, անչիգեար,
Ես մեռնում եմ, ինձի խղճայ,
Իմ Աստուած ազիզ եար...

Ռուբէն Հեզեան

Բալախանի



***

Մենակ տխուր ես նստած եմ
Սենեակում,
Եւ անդադար մտորում եմ
Լուռ, տրտում...
Մտորում եմ, ես մտորում
Անդադար,
Եւ յուզւում եմ, նորից յուզւում
Վշտահար...
— Ինչպէս անցան իմ կենսուրախ
Լաւ օրեր,
Երբ դեռ հոգուս չէին պատել
Սև մաքեր...

Օր Ան. Ծաս-եան

Բագու

*
* *

Բարձր կամարից լուսին է նայում
Եւ վրաս ձգում իւր ոսկէ շղեր.
Մեղմիկ զեփիւռը անձայն շշնջում
Ու իւր հետ բերում ինձ տխուր յուշե՛ր։

Նայում եմ վերեւ լուսնի շողազարդ
Եւ մանկութեանս օրերը յիշում.
Աստ՛ղ, ամպեր եմ օրերն իմ ապրդ,
Երանց բաղել եմ անդարձ անցեալում։

Ու լուռ մտորում կամքնուած գետափին,
Իմ անդարձ ուրախ օրն եմ երազում.
Արցունքը մէկ մէկ իմ հէգ աչքերին,
Զողում եմ, փապլում ու գետին ընկնում։

Եւ լուսինը լուռ վերեւում փայլում,
Վրաս է ձգում իւր ոսկէ շղեր.
Մեղմիկ զեփիւռը հեքիաթներ հիւսում
Ինձ բերում անցած օրերի յուշե՛ր...

Հ. Հայկազունի

Բագու

ԾՈՎԸ

Գարնանային մի զով ու խաղաղ գիշեր էր: Լուսինը դեռ ևոր էր բարձրացել լուսաւորելու իւր բիւր ու դիւթիչ շողերով, ջինջ լազուրից երկրին...

Այդ ժամին, խորասուզած անյատակ մտքերի ծովում, թափառում էի եւ վեր յիշում իմ ուրախ անցեալը ու համեմատում թախծոտ ներկայիս հետ...

...Ա՜խ... որքան քաղցր էր իմ անցեալը, իմ երազ մանկութիւնը...

Ա՜խ... նրանք իմ համար քաղցր էին այնքան, որքան լուսինը՝ երկրի համար, որքան աստղերը հմայիչ լազուրի համար...

...Քա՜ղցր էին... անուշ...

Հեռից մանրիկ ալիքները մեղմագին շրշունքներով գալիս էին ու դրոշմում ծովի մամռապատ ափին քաղցր համբոյրներ եւ ճորեն վերադառնում նեռները... հեռանե՜ր...որորուն, պտոյտներ կազմելով...

. . . . . .

Բայց գիշերւայ խաղաղ ժամին, խաւարը իր գահը մտաւ, ալեծուփ ծովը երփներանգ դարձաւ նաւերի գոյն գոյն լապտերներից, իսկ աստղերը, որոնք այնքան խանդավառ ժպտում էին լազուրի ծովում եւ լուսաւորում ճնած երկիրը... երազկոտ երկիրը...

Ա՜խ... ես մեն-մենակ... այդ իսկ վայրկեանին, իմ ընկերներն էին տխուր անսահման խոնարհ մոլար...

Ալ. Հայրապետեանց

Բագու



ՍԱԿԱՅՆ ԵՐԱՆԻ

Գիշերն էր խաղաղ ու երկինքը ծով,
Աստղերն էլ լուղորդ այդ ծովի միջին՝
Մերթ խորասուզուում,—մերթ ժպտում նազով,
Մերթ էլ իրարից թագնուում կրկին։

Հեռու քաղաքից, ծովափին մենակ՝
Ես նստած էի անվերջ խոհերով...
—Հանդիստս նորից դու վրդովեցիր,
Երբ ինձ մօտ եկար համբ քայլերով...

Ծփանքը ծովին, հմայք երկնքին
Չէին նմանուում քո հուր աչերին...
Քո գեղեցկութեամբ վեհ, Աստուածային
Կախարդել էիր ամենքի հոգին։

Ու ինչպէս հովտի վտակ քաղցրախօս
Քո անուշ երգի ելևէջները...
—Սուզուում էին մինչ խորքերը հոգուս
Փոթորկում այնտեղ տիրող անդորրը...

Սակայն երանի երազ չլիներ,
Ինչպէս ինձ թւաց իմ հանդիստ ժամին...
Եւ կեանքն իրական լի հրաշալիքներով
Մեզ իր գիրկն առնէր անվերջ գգւանքով...

Բալախանի Օր. Վարդուհի

«Ծիլ» Ամսանախ 1914 թ., I.

ԽՂՃԻ ԽԱՅԹՈՑԸ

Դէպի Ն...ն էինք գնում ես և իմ ընկերը ուղեկիցը առևտրական գործերով։

Մեր դիմաց, վագոնում նստած էր մի ծերունի իւր որդու հետ, որը, ըստ երևութին, 15 տարեկան էր։

Ծերունու մազերը արդէն ճերմակել էին, այնպէս, որ նայողին կթւար թէ նա անշուշտ 80 տարեկան էր։

Նա մի բարձրահասակ, բայց կորացած ծերունի էր, նւազ, կնճռապատ դէմքով. երևում էր, որ շատ վշտի տէր էր։

Լուռ էր. աչքերը յառած մի անորոշ կէտի մտածում էր լռին։

Որդին էլ այդ ժամանակամիջոցում պարապ չէր, նա էլ, մի դասագիրք (գուցէ և ընթերցանութեան) ձեռին կարդում էր ամենախորը լարուած ուշադրութեամբ։

Ծերունին նայեց նրան մի վայրկեան և նրա աչքերը լցւեցին փայլուն արցունքներով, որոնք վկայում էին, որ ծերունին այդ րոպէին մի բան էր յիշել։

Մենք, ես և իմ ընկերը, խօսում էինք մի քանի հարուստների մասին, կեանքի մէջ նրանց գործունէութեան մասին և տաք տաք վիճում։

Այդ միջոցին ծերունին ուշադրութեամբ լսում էր մեր խօսակցութիւնը և կարծես նրա

մէջ մենք նկատում էինք մի փոփոխութիւն՝ կարծես նա աւելի էր յուզւում մեր տեղին վիճաբանութիւնից և նկատելի էր, ինչպէս արցունքները մէկիկ մէկիկ շողշողալով գլորւում էին նրա տանջւած և անհուն վշտից փոս ընկած այտերի վրայով և ընկնում վագոնի սառը յատակին։

Մենք, նկատելով այդ, ուշադրութիւնները դարձրինք դէպի ծերուկը և ամեն մէկս պատրաստւում էր խօսել ծերունու հետ, երբ ես վերջապէս, ընդհատելով մեր մէջ այդ վարկեանին տիրած լռութիւնը, հարցրի.

—Ինչո՞ւ էք այդպէս տխուր և կարծես լալիս էք դուք։

Նա մի քննական հայեացք ձգեց ինձ վրայ և յոգոց հանելով կրծքից, խօսեց ցած, մելամաղձոտ տոնով.

—Էհ՛, մի հարցնէք որդիք, իմ դարդը մեծ է, շատ մեծ. մի հարցնէք, որդիք, մի՛ հարցնէք...

Խօսելու ժամանակ նրա ձայնը դողում էր, հոգեկան ալեկոծումից։

Պաուզա։

Ամենքս տխուր, նայում էինք յառած աչքերով ծերունուն և սպասում, որ նա շարունակէր։

Եւ նա, պահ մի լռելուց յետոյ, սկսեց նոյն ցածր և մելամաղձոտ ձայնով.

«Էհ՛, լսեցէք, որդիք. ես ձեզ պատմեմ.

«Գիւղի ամենաժլատ հարուստը տզրուկի պէս ծծում էր անմեղ գառների՝ խեղճ միամիտ գիւղացոց արիւնը»։

«Ամեն տեսակ սատանայութիւն գործ էր դնում, նրանց լպստած բաց թողնում, որոնք այնուհետև մնում էին փողոցում կանգնած վիզները ծռած, առանց օրական նոյն իսկ մի կըտոր հացի...»

Նրա աչքերը լցուեցին արցունքներով, լացը խեղդեց նրա առանց այն էլ դողացող ձայնը և նա սրբելով աչքերը և պահ մի լռելուց յետոյ շարունակեց մի խոր հառաչ հանելով կրծքից։

«Եւ այդ «աղայի» մտքովն անգամ չէր անցնում, որ ՆԱ, ԲԱՐՁՐԵԱԼԸ, իւր ամենատես աչքերով տեսնում էր այդ բոլորը և որ ՆԱ իրեն կարող էր պատժել...

«Եւ մի օր երեկոյեան, երբ նա նստած էր դուռդաբար փափուկ թախտի վրայ, նրա առաջ յայտնուեց մէկը...

«Բարձրահասակ, յաղթանդամ, բրդբրդոտ մի էակ էր նա, ոչ մարդ, ոչ անասուն։

«Գլուխը նման էր կէս առիւծի կէս, մի այլ գիշակեր կենդանու, մարմինը մի այլ այդպիսի կենդանու նման և սուր սուր ժանիքներով, սուր չանկերով, որոնցով մօտենալով սկսեց չանգրուտել, կծել և ծակոտել նրան...

«Եւ անվերջ...

«Այդ էակը Խիղճն էր...

«Առաւօտեան արդէն նրան գտան մեռած։

«Նա ընկած էր գետնին երեանի վայր։

«Բոլորը ուրախ էին այդ օրը...»

Ծերունին լռեց։

Արդէն տեղ էինք հասել, բայց չգիտէինք արդեօք գնացքը շարժւում էր թէ ոչ։

Կոնդուկտորը մեզ յայտնեց և մենք իջանք։

Բայց մեր միտքը զբաղուած էր ծերունու պատմածով։

Արդեօք նա ինչո՞ւ պատմեց այն...

Բագու Հայկ Արզումանեան

*
* *

Լեռան լանջին եարս կանգնած
Անհուշ, անուշ ձէն կուտար.
Փափուկ կրծքին վարդեր շարած
Ծաղկանց միջով ման կգար...

Եարիս տեսքին պապակ հոգիս,
Թևեր առաւ ու թռաւ.
Յաւիտ ուռած խաւար սրտիս
Այսօր երկնից լոյս իջաւ...

Բագու Ալ-Մաք

*
* *

Ոսկե օրերի շարանն անցաւ
Տխուր ու աւեր.

Գարնան ոյզերի բուրմունքը մարեց
Անո՛ւշ վայելքով:

Գաղուկ արտերի բրիոնը մեռաւ
Անկեանք ու անսեր.

—Ա՜խ, հոգուս խորքում իմ երգը ընդ
Արծաթ կարկաչով...

Մանցի մենակ աւեր դաշտերում
Լո՛ւռ ու բախծալի.

Վարդաբեր գարնան կարոտը անհուն
Հեգ կրծքիս անդնած.

Աշնան մահաբեր հողմերը տրտում
Սուրում են, շաչիս...

Հոգուս անրջում տենչերս սիրուն
Մեռնում են սառա՜ծ...

Գառնիկ Ղազարեան

Թիֆլիս

ԽՂՃԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

(ԿՐՈՒՄՄԱԽԵՐԻՑ)

Մի հարուստ մարդ, Խրիզ անունով, հրամայում է իւր ծառաներին արտաքսել տնից մի խեղճ այրի կնոջ երախաների հետ, նրա համար, որ նա չէր կարողացել վճարել սենեակի վարձը։

Երբ ծառաները գալիս են, կինը սկսում է խնդրել.—«Սպասեցէք մի քիչ! ես ինքս գնամ ձեր պարոնի մօտ—դուցէ նա զթայ ինձ»!

Այրին գնում է հարուստի մօտ իւր չորս երեխաների հետ միասին,—հինգերորդը հիւանդ պառկած էր,—և նրանք բոլորը աղերսում են չարտաքսել իրենց։

Բայց Խրիզն ասում է.

—Կամ դուք պարտաւոր էք այս րոպէիս վճարել ձեր պարտքը, կամ թէ չէ, ես չեմ կարող փոխել իմ հրամանը։

Մայրը սկսում է դառնապէս լալ և ասում է.

—Ամբողջ իմ աշխատանքը գնաց երեխայիս բժշկութեան վրայ, նրա հիւանդութիւնը խանգարեց ինձ աշխատել! Երեխաները լալիս էին և աղերսում չարտաքսել իրենց։ Բայց Խրիզն երես է դարձնում նրանցից և հեռանում դէպի պարտիզի զրուցարանը և պառկում բարձերի վրայ, որովհետև յոգնել էր։

Հեղձուցիչ օր էր։

Հենց ճիշտ զրուցարանի տակով հոսում էր գետը և թարմացնում օդը։ Հանդարտ էր։ Օդը, կարծես մեռել էր. լսում էր միայն ափում եղեգնու հանդարտ շշշիւնը։

Յանկարծ Խրիզին թւում է, որ ինքը լսում է խեղճ այրի կնոջ երեխաների լացը և նրա համար ծանր էր անցկացնել բազմոցի վրայ։

Նա սկսում է ականջ դնել գետի աղմուկին։ Նրան թւում է, որ ինքը պառկած է անծայր ծովի ափին և նա աւելի է խրւում բարձերի մէջ։

Երբ դա կրկին սկսում է ականջ դնել, հեռւում լսւում է ամպրոպի ճայթիւնները։ Սկսւում է կայծակ։ Նրան թւում է, թէ ինքը լսում է ահեղ դատաւորի ձայնը։

Նա արագութեամբ վեր է թռչում, վազում տուն, և հրամայում տուն թողնել խեղճ այրի կնոջը։

Բայց նա արդէն հեռացել էր իւր երեխաներով և անհետացել էր անտառում։

Նրան ոչ մի տեղ չկարողացան գտնել։

'Ի միջի այլոց եղանակն էլ փոխւում էր։

Կայծակը որոտում էր, տեղում էր սաստիկ անձրև։

Խրիզը սաստիկ ալեկոծւած և յուզմունքով թափառում էր չորս կողմ։

Միւս առաւօտ նա իմանում է, որ հիւանդ երեխան մեռել էր անտառում, իսկ միւս երեխաների հետ կինը գնացել էր հեռուն, անյայտ թէ ուր։

Այդին զրուցարանի հետ զգուելի են դառնում նրան և նա էլ չի կարողանում զարմանալ գեռի թարմութեամբ և քչքչոցով։

Շուտով դրանից յետոյ Խրիզը եւանդանում է։

Երբ նա պառկած էր տաքութեան մէջ, նրան միշտ լսելի էր եղեգնի շշնջիւնը; գեռի քչքչոցը և մօտեցող կայծակի խուլ ձայնը։ Այդպէս էլ նա մեռաւ։

Թարգմ. Հայկ Արզումի.

* * *

Որպէս մի սխալ տարագիր դժբախտ,
Զրկուած իւր վարդից հեռու երկրում.
Մոռացած երգ-խիզդ ու տխուր վիստ,
Կեանքից իւր զգուած վշտաթեկ տրտում,

Ես էլ ցրա պէս տխուր ու տրտում,
Զրկուած լինելով կեանքիս հաստատից.
Զգցնելով ինձ սիրելի կեանքում,
Լքուած հեռացայ, հեռու մարդկանցից...

Մերվ Իշխան Հայրապետեան

ՍԻՐՏՍ

Սիրաս է մի խորան տիեզերքի մէջ
Կեանքի յոյզերու,
Ուր տեղ կվառուին ջահերը անշէջ
Պատիր յոյսերու։
Սիրաս է մի հովիտ անվերջ արցունքի
Հոսող գետերու,
Ուր տեղ կլսուին երգեր տանջանքի
Հէգ հոգիներու։
Սիրաս աղօթարան և սիրաս է տաճար
Յիշատակներու...
Որ միայ յաւէտ խոհերով անճառ
Մաշող ցաւերու։
Սիրաս է գերեզման մռութ, խաւար, անլոյս
Մերժուած սէրերու,
Որ հեծէ անդուլ, տէնչովմը անյոյս
Շոգիանալու...

Կարին Հրանդ Համբարեան

*
* *

Սեւ գիշերներին արծի թեւով
Դու ինձ մօտ եկար, ողջս ցնցեցիր...
Հարազատ հոգ փաղաքշանքներով,
Իմ բիւր վշերս դու փարատեցիր...

Ու երբ իմ հոգու վէրքերը խորունկ,
Անհեռ բուժեցիր, իմ Սէր, իմ Աստուած...
Նորից չքացար անձայն, անաղմուկ,
Չգիտեմ թէ ո՞ւր, ա՜խ, անվերադարձ...

Բագու Անիսի

*
* *

Կեանքիս մէջ ընկեր միշտ որոնեցի,
Բայց որոնածս երբէք չգտայ.
Օրերս անդարձ, անհետ թաղեցի,
Մատաղ հասակիս հոգով շտացայ։

Վիշտ ու տառապանք ինձ ընկերացաւ,
Հոգով սիրեցի ես մենակութիւն.
—Ո՞վ ծեծեց դուռս ու լռիկ անցաւ.
—Ո՞վ է իմ սիրտը մթնում փաղաքշում...

Դաս Օր. Արշանուշ

*
* *

Եկա՛յ ու կերթամ յաւե՛տ առ յաւեռ,
Միեռ կ՚որոնեմ նրան որ չկա՛յ.
Անծիր նամբեռում մենա՛կ այսուհեռ
Երբե՛ք չեմ ասի՛. «ահա՛ քեզ գտայ...»

Թախիծը գրկած հոգուս վերահար,
Ոտքս կդնեմ անյայտ ճեռուներ.
Հեգ ու մշուշոռ նամբեռում խելառ,
Ինձ կ՚ողջունեն իմ անմեռ յուշեր:

Անյայտ աշխարհի տեսիլները վառ,
Միեռ յարափոփոխ նուրբ պատկերներով.
Հոգուս ծայրեռում կեռպան անմար.
Ինձ կ՚պարուրեն նրբին ֆլիբանոով:

Խուլ վիշտը հոգուս կ՚երգեմ յաւեռ,
Թախիծս ցանեմ հողմերի ծոցում.
Կ՚քայլեմ մենակ, մենա՛կ այսուհեռ
Մինչեռ որ հասնեմ.—ափեր երազո՛ւն...

Ս. Վարանդի

Բալաքանի

ԱԶՆԻՒ ՄԱՐԴԸ

(Գերմաներէնից)

Օյգին Հելտա

(Երեկոյեան ժամը 7-ն է. բանկի վերատեսուչը մտնում է իր կնոջ սենեակը։ Վերջինս նստած է իր գրասեղանի առաջ և երբ քայլեր է լսում, թագցնում է մի նամակ և փորձում է ծիծաղել)։

——

Ամուսին.—(Կնոջը) Դու լա՞ց ես եղել։

Կ ի ն ը.— Ո՛չ, ոչինչ չկայ, միայն մի քիչ ջղայնացել էի։

Ամուսին.—Շուտով ինձ կպատմես, թէ ինչ է պատահել! Ինչո՞ւ ես լաց եղել։

Կ ի ն ը.— Ոչինչ. մի անանուն նամակ ստացայ։

Ամուսին.—Հա՛, ի՛ հարկէ, քեզ տեղեկացրել են, որ ես մի սիրուհի ունիմ, այնպէս չէ՞։

Կ ի ն ը.— Այո։

Ամուսին.—Մէկ, երկո՞ւ թէ՞ երեք հատ։

Կ ի ն ը.— Միմիայն մի հատ։

Ամուսին.—Անանուն նամակագիրը շատ համեստ է երևում, նա կարող էր երեք իլլիւզիաներ բանաստեղծել։ Իսկ դո՞ւ։ Դու հաւատացի՞ր։

Կ ի ն ը.— Ո՛չ!

Ամուսին.—Ուրեմն էլ ինչո՞ւ ես լայ եղել։

Կ ի ն ը.— Մինչև անգամ լա՞ց չլինէի։ Սա դեռ քի՞չ է։

Ամուսին.—Հա, ուրեմն, այնուամենայնիւ դու դարձեալ հաւատացե՞լ ես։

Կ ի ն ը.— Սկզբում ոչ! յետոյ կասկածեցի, իսկ հիմայ—

Ամուսին.—Հիմայ, ինչ ես կարծում հիմայ։

ԿԻՑԲ. — Հիմայ, երբ ես քո մեղմ դէմքը, քո համարձակ հայեացքը տեսայ, այլևս ոչ մի խօսքի չեմ հաւատում։

ԱՄՈՒՍԻՑ. — Այժմ խելօք ես մտածում։

ԿԻՑԲ. — Այո, բայց հինգ րոպէից յետոյ դարձեալ կյիմարանամ, թոյլ կամքիս պատճառով ես էլ եմ ամաչում, բայց ի՞նչ արած ես մեղաւոր չեմ։ Ամենայն սիրով ես կը-պատռէի այս նամակը, քեզ չէի ցոյց տայ, բայց—

ԱՄՈՒՍԻՑ. — Մի խօսքով կասկածում ես ինձ վերայ։

ԿԻՑԲ. — Բարկանում ես։

ԱՄՈՒՍԻՑ. — Ոչ՛, որովհետև ես վաղուց գիտեմ, որ դուք կանայքդ անպատիւ ստախօսներին, որոնք մեզ խայտառակում են, առանց իրանց ստերը փաստերով հաստատելու, աւելի հաւատ էք ընծայում, քան ձեր ամուսիններին, որոնք տարիներ շարունակ իրենց հաւատարիմ բնաւորութիւնը, իրենց սէրը ձեզ հաւատացրել են։ Ես քաջ գիտեմ այն փորձառութիւնը, որ դու ունեցել ես մեր ամուսնութեան հինգ տարուայ ընթացքում, այնքան ծանր չեն կշռում, որքան անծանօթի դատարկ կասկածները։

ԿԻՑԲ. — Բայց սրանք դատարկ կասկածներ չեն։ Անունները են յիշած, փաստեր են ցոյց տրուած!

ԱՄՈՒՍԻՑ. — Փաստե՞ր—ո՞ւր է նամակը։

ԿԻՑԲ. — Ահա!

ԱՄՈՒՍԻՑ. — (Կարդում է բարձր). Յարգելի տիկին! Ես մի տխուր պարտք կատարած եմ հա-

մարում, երբ Ձեզ յայտնում եմ, որ Ձեր պարոն ամուսինը, այն հաւատարմութեանը, որը դուք նրան շնորհել էք անարժան է. Վեց ամսից իվեր, նա յարաբերութիւն ունի մի օրիորդի հետ։ Նրա անունն է Էլիզէ Օսվալդ, որը և ապրում է Յովսէփեան փողոց № 102 մի որբևայրի տիկին Մայերից վարձած սենեակում։ Վարձը վճարում է Ձեր ամուսինը, եթէ ինձ չէք հաւատում դիմեցէք յիշեալ տիկին Մայերին։

Ամուսին. —(Կամենում է նամակը պատռել), լկտի ստորութիւն!

Կին. — Շարունակիր, դեռ չես վերջացրել!

Ամուսին. —(Շարունակում է) Ձեր ամուսինը այցելում է այդ օրիորդին համարեա ամեն օր, հարցրէք դռնապանին, նա իմ խօսքերը կհաստատի։ Ես իմ բարոյական պարտքն համարեցի, Տիկին, Ձեզ վերջապէս յաղորդելու, որ դուք կարողանաք դրա առաջն առնել։

Կին. — (Վախկոտութեամբ ամուսնու դէմքը քննելով)—Հը, ինչ ես պատասխանում դրան։

Ամուսին. —(Հանգիստ). Ոչ մի խօսք. բոլորը ճըշմարիտ է։

Կին. — (Լալիս է) Ճշմարիտ է։ Օ՜հ, ես գուշակում էի!

Ամուսին. — Ոչ մի բան չէիր գուշակում և ոչ մի պատճառ չունես լաց լինելու. եթէ յանցաւոր լինէի ես ուղղակի կհերքէի, որովհետև դու երբէք քեզ այնքան չէիր ստորացնիլ,

որ գնայիր Տիկին Մայերից և դունապանից տեղեկութիւններ հաւաքելու։

Ուրեմն կամենում ես հանգիստ լսել, թէ ոչ։

ԿԻՑԸ. — Ես կամենում եմ ճշմարտութիւնն իմանալ, ամբողջ և իսկական ճշմարտութիւնը։

ԱՄՈՒՍԻՑ. — Այդ օրիորդը ոչ թէ իմ սիրուհին է, այլ իմ խնամակալութեան տակ է գտնւում։ Նա վաղուց այլևս աշխարհիս երեսին չէր գտնւի, եթէ ես չլինէի։ Երբ դու ամառանոցումն էիր միքանի ընկերներիս հետ, բացօդեայ էինք ընթրում։

Եւ մի օր էլ, երբ Յովսէփեան կամուրջն էի անցնում, տուն վերադառնալիս նկատեցի, որ մթութեան մէջ մի կերպարանք շարժւեց և հէնց կամենում էր ջուրը նետւել, ես արգելեցի։ Նա երկար ընդդիմադրեց և վերջապէս երկար և յուսահատական մարանչումից յետոյ ինձ յաջողւեց նրան իր անձնասպանութեան մտքից յետ կանգնեցնել, վերջապէս, երբ ես նրան իմ օգնութիւնը խոստացայ, նա հանդստացաւ և խոստովանւեցինձ, թէ նա մի անբարեխիղճ զեղծուցանողի զոհ էր դարձել...!

ԿԻՑԸ. — Զզւելի!

ԱՄՈՒՍԻՑ. — Մի ամենօրեայ սովորական երևոյթ։ Որովհետև անբաղդը ոչ տուն ունէր, ոչ էլ զեղծուցանողից մի վրկութիւն կարելի էր յուսալ—նա ամուսնացած մարդ էր—նրան ճնում էր միայն իր ամօթը մահով ծածկ-

կել։ Ես չէի կամենում իմ փրկութեան գործը կիսատ կատարած համարել, խօստացայ խեղճին մի տեղ տալ, ճանապարհ և միջոցներ ցոյց տալ, որով կարողանար նա մի նոր կեանք սկսել։ Եւ ինչ որ ես այն ցաւակցական բոպէին խօստացել էի, պէտք է կատարէի։ Մեր բանկում մի երիտասարդ պաշտօնեայ ունինք, որը հետաքրքրւում է նրանով և կամենում է շուտով ամուսնանալ, իր հայրն էլ սիրով կնդունէ խեղճին։ Տեսնում ես արիւն տրագեդիան լաւ վերջ ունեցաւ։ Այժմ երբ դու ամբողջ ճշմարտութիւնը լսեցիր կարող ես, եթէ ցանկութիւն ունես, բաժանւելու պրոցեսը սկսել։

ԿԻՆԸ. — (Նրան ընդմիջելով) Ես միայն չեմ հասկանում, ինչու մինչև հիմայ ծածուկ էիր պահում և արդէն վաղուց չէիր պատմել։

ԱՄՈՒՍԻՆ. — Քեզ յայտնի է հոգեակս,—սուրբ Գիրքն ասում է. ,,Ձախ ձեռքը չպէտք է իմանայ, ինչ է անում աջը''։ Դու կարող էիր այն բարերարութիւնն էլ չիմանալ, որ ես ուրիշ շատերին գաղտնի արել եմ, եթէ անանուն նամակագիրը ,,իր պարտքը կատարած չլինէր''։

ԿԻՆԸ. — (Զարմացից սիրախառն և զարմացած) Բարի, ազնիւ! Սրտով ես երբէք վերադ չէի կասկածում!...

Ամուսին. — Շատ էլ անիրաւացի կլինէր, որովհետև քեզ յայտնի է, ես քո հանդէպ միշտ սրբատաբաց և անկեղծ եմ գտնուել. նախ այս բանում ես ոչ մի բան չըթաղցրի. — (ինքն իրան) Միայն բացի այսքանից, որ ես ինքս էի էլիզի անբարեխիղճ զեղծուցանողը!

Գիժ

Թիֆլիս

*
* *

Հէնց որ արևը սարի եռևից
Իր հրաժեշտի համբոյրը կտայ,

Հէնց որ լուսինը երկնքում նորից,
Իր աղօտ լոյսով փայլէ, կշողայ,

Ահա այդ ժամին իմ վհատ սիրտը,
Այդ միակ վկան իմ մատաղ կեանքի,

Մահուան սարսուռով կարօտը կզգայ
Անցած օրերի, երազ օրերի...

Եւ երազի մէջ անցած օրերի
Շարան կայցելէ ինձ մի ու կերթայ,

Նրանից յետոյ տխուր անհատնում...
Ամեն ինչ երկրում տաղտուկ, անպատում,
Խաւարն է միայն մռայլ անսահման
Եւ տանջանք թախիծ իմ սրտի համար...

Ժորժ-Արտուր

Բագու

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

I.

«Լուսադէմին» գրական ժողովածու 1 գրքոյկ գինն է 20 կ. էջ 48, Բաքու 1913 թիւ

Թերթում եմ առջևս դրած «Լուսադէմին» գրական ժողովածուի 1 գրքոյկը, որը զուտ Բաքւայ հայ երիտասարդ և սկսնակ գրիչների թոթովանքներն են.

«Լուսադէմին»-ի ղեկավարները «իրենց շուրջը համախմբուած ունենալով տեղիս երիտասարդների մի խմբակ, նպատակ ունի ստեղծելու մի շրջան, ուր տեղիս երիտասարդութիւնը (Ո՛չ ուրիշ տեղի) (ընդգ. մերն է Գ.) կարողանային ուսումնասիրել գրականութիւնը, մանաւորապէս մայրենիդ և գեղարուեստը»...

Եւ մարդիկ զետեղել են այդ ժողովածուի մէջ ուսուցանելու գեղեցիկ գործեր!

Նրանց նպատակն է եղել տալ այդ ժողովածուն մի պարզ պատճառով, այդ այն է, որ իրենց անուններն ու ազգանուններն դպագրուած տեսնելու հայկական տառերով հայկական ճաշակով, ահա բոլորը։

Մեր կողմից ողջունելի է ժողովածուն, որպէս մեր իրականութեան մէջ մութ ու նոր ոյժեր երևան հանելուն մի ազդակ։

Այժմ տեսնենք ի՞նչ է տալիս հասարակութեան այդ ժողովածուն, ուր զետեղուած են մօտ տասը հատ չափածոյ գրուածքներ, հինգ հատ արձակ և մէկ հատ էլ դրամատիկական էտիւդ.

Սկզբից և եթ մարդը՝ ընթերցողը նկատում է մի բան, որ այդ համախմբված մարդիկ խաղ են։

Մեր ասածին կարող են վկայել հէնց իրենց ժողովածուի մէջ տեղ գտած նիւթերը։

Կարդում եմ առաջին իսկ արձակ գրածքը պ. Արամ Ալչուջեանի «Թառամող ծաղիկներ» վերնագրով։

Ի՜նչպիսի մեծ և խորհրդաւոր վերնագիր... Իսկ միջի նիւթը... Ցրագներ և ճրճաուն ու փրքուն բառեր...

Հայերէնով սկսած և չինարէնով վերջացրած է պարոնի այդ գործը։

Ահա մի նմոյշ.«Յանկարծ ինձ մօտ եկաւ Մարինէն։ Նա երկար, շատ երկար կանգնեց իմ հանդէպ, լուռ նայեց ինձ, ապա հեկեկալով ընկաւ կրծքիս. «Դու ինձ չե՞ս սիրում, լաւեց նրա հեկեկոցի միջից։ Թէ եղել է իմ կեանքում մի վարկեան, երբ ես երջանիկ եմ եղել, այդ այն վայրկեանն էր»?!!! (Ընդգծումը մերն է. Գ.)

Յետոյ՝

«...Ամաչեցի իմ արած քայլից և խշխշացընելով մօտի ծառերը՝ հեռացան։ Նրանք ևս, ասես մի բան հասկացան, ելան գնացին»...

Մեզ համար մութ է։ Արդեօք ո՞վ հեռացաւ, ծառերը խշխշացնողը, թէ՞ նրանք։ Եթէ ծառերը խշխշացնողը, այն դէպքում թող լինէր «հեռացայ», ոչ թէ «հեռացան», իսկ ո՞ւմ ամսին է այդ «նրանք էլ ելան գնացին»...

Եւ այն աղջիկը, որը շատ, շատ անգամ է նրա գրկի մէջ ժամեր անց կացրել, յանկարծ մի տարուց յետոյ նրան չի ճանաչում և դրա փոխարէն դատողութիւն է անում։

«Նա այնքան էր փոխուել և անճանաչելի դարձել, որ եթէ ֆիչ առաջ նրա վասին ասածներս չլինի, հազիւ թէ կարողանայի ճանաչել»! (ընդգծումը մերն է Գ.)

Զարմանալի բան!

— ?

Իսկ եթէ չմտածէր այդ աղջկայ մասին, որը շատ անգամ էր նրան ճանաչելի դարձել իւր համբոյրներով։ Ողորմելի մարդիկ!

Այդտեղից իսկ երևում է, որ աչքի առաջ մարդիկ չեն ունենում գրելը, այլ իրենց անուններն ու ազգանունները և ուրիշ ոչինչ։

Պ. Սարգսի «Հայի աղջիկը» կարելի է նոյնպէս թոյլ համարել։ Պ. Ս. Շահրեանի «Գնացքում» մի աննիւթ և առանց որևիցէ տրամաբանութիւն զարթեցնող մի պատմուածք է։

Լաւ է պ. Ռ. Մուսայէլեանի «Ոսկի երազներից»։

Դրամատիկական էտիւդը թոյլ գործ է և յիշեցնում է հեռաւոր կերպով Ստանիսլաւ Պրշիբշևսկու «Զիւնը»։ Լեզուն հայերէն չէ!

Գալով բանաստեղծական բաժնին, կասենք, որ բաւարար կարելի է համարել եղածները։

Ժողովածուի զարդն է կազմում օր. Սոնայի «Դեղնած արտը արևի տակ...» բանաստեղծութիւնը։

Վերջացնելով մեր ասելիքը «Լուսադէմին»-ի մասին, կասենք այս, որ պէտք է աշխատել շաբլոնական ձև չտալ ժողովածուին։

II.

«Նոր ուղի» գրական ալմանախ Ա. Բ. Գ.
գիրք Ալ-պօլ գինն է 10 կ. 1913-14 թ.

Ալեքսանդրապօլում հրատարակվող գրական մի նոր ժողովածու է այդ „Նոր Ուղի"-ն։

Նա մի փորձ է անում նոր ուղի բանալու հայ անփորձ գրիչների համար, որոնք մինչև հիմա վստահութիւն չեն ունեցել դուրս գալու իրենց սկզբնական աշխատանքներով։

Մեր նպատակից դուրս է այստեղ մանրամասնօրէն խօսել ժողովածուի մէջ տեղ գտած թէ բանաստեղծութիւնների և թէ արձակների մասին, միայն ընդհանուր դիտողութեամբ կանցնենք, մեր ասելիքը թողնելով ապագային, քանի որ, դեռ ժողովածուն ինքն էլ որոնումների մէջ է, իւր համար նոր ուղի է փնտռում։ Բայց գուցէ ապագայում նրանք գտնելու են այն մեծ ուղին, որով և իրենք են ընթանալու և իրենց շուրջը համախմբուած պատանիները, այդ միայն ապագային է, իսկ ներկայումս դեռ որոնումներ է անում։

Բայց մի բան, որ մենք չտեսանք առաջին ժողովածուն քննադատելիս, այդ այն է, որ նրանք գիտեն նիւթերի ընտրութիւններ անել և ունեն հստակութիւն։

Ամենուր մենք տեսնում նոր, բոլորովին նոր հրատարակութիւններ, նոր գրական ալմանախներ ու ժողովածուներ, որոնք մեծ մասամբ մեր երիտասարդ ոյժերի գործերն են և մարդ ակամայից միտք է անում, թէ արդեօք, չէ՞

սկսում արթնացումի նորանոր ազդակները հընչել հեռուներում։ Արդեօք 60-ական—70-ական—80-ական—90-ական թուականները չե՞ն սկսում նորից իրենց բազմաթիւ հովերով։

Մեր երիտասարդութիւնը չէ՞ գիտակցել այն մեծ աւանդը, որը մեր անդրանիկ մարտիկներն են արել ու անցել, այդ բոլորը եռանդուն կռիւներ չե՞ն արդեօք, որը տեղի ունեցաւ 60-70-80-90-ական թուականներին։ Արթնացումի ազդակները չե՞ն այդ բոլորը, որ ամենուր եռանդուն կերպով աշխատում են ու գործում, գործում են ու աշխատում։

Մեծ ապագայի, այո՛, այն մեծ ապագայի, որոնց նա սպասում է։ Փառք նրանց, որոնք այդ նորագոյն պայքարի նախօրեակին ազատ մարտիկներ կլինեն և արթնացումի զանգը զողանջեցնելով կանցնեն և օրինակելի կդառնան իրենց յետնորդ սերունդներին։

Այդ բոլորը նոր պայքարի և նոր յաղթանակի ազդակներն են, նրա նախօրեակին, ուր ամեն մի հայ գիտակից պատանի իւր բարոյական պարտքն է համարում նեռւել և արժանանալ փառք ու պատիւ։ Մենք ողջունում ենք „Նոր Ուղուն“ և նրա պէս բոլոր այն ազդակներին, որոնք մեծ դեր ունեն կատարելու մեր հայ երիտասարդների շրջանում։

Գրախօս

ՊՕՍՏ-ԱՐԿՂ

ԲԱԳՈՒ. — Ս. Շահրեանին. Աշխատեցէք ընթերցանութեամբ շատ պարապել և ֆիլիսոֆայութիւնների յետևից չնկնել առանց գիտակցելու։

Փոխադրութիւնը թոյլ է, չի՛ տալի. ուղարկեցէք նորերը։

ԲԱԼԱԽԱՆԻ.-Օր. Վարդուհուն, շարունակեցէք աշխատակցել մեզ։

» Դաւ. Յար-ին. Հարկաւոր է ինքնուրոյնութիւն ունենալ։ Չենք տալի։ Բալախանիի քաղաք (Բագու) նամակներին կպցուում է 7 կոպ. մարկա։

ԹԱՖԼԻՍ. — Գառնիկ Ղազարեանին.—Ուղարկեցէք նորերը, սպասում ենք։

» Արմեն Անանեանցին.—«Դժբախտ ընտանիք»-ը թոյլ է իսկ «պեսիմիստ»-ին մնաց յաջորդ համարին։

» Երուանդ Տէր-Գրիգորեանին.- «Պանդուխտ»-ը չի՛ տալի։ Միւսները յաջորդիւ։ Շարունակեցէք։

ԳԱՆՁԱԿ. — Մ. Յովասափեանին. Աշուղական բանաստեղծութիւններ չենք տպագրում. անյարմար են։

Ղ. Ա Ր Ս. — Օր. Արշանուշին։ Շարունակեցէք աշխատակցել։

ԿԱՐԻՆ. — Հրանդ Համբարեանին։ ընդունուած են. յաջորդիւ. թերթկուղարկենք։

ՄԵՐԻՒ. — Ի. Հայրապետեանին։ Միւսը չի՛ տալի։ Ուղարկեցէք նորերը։

ԴՈՐՊԱՏ. — Սիմ. Առաքելեանին։ Միւսը յաջորդ համարին։ Շարունակեցէք աշխատակցել։

Վ. Ա Զ Ա. — Սոլոմոնին։ Կարդացէք մեր պայմանները։ Ձեր իսկական անուն-ազգանուն չլինելու պատճառով չնդունեց։

Խմբագրեց՝ Սերգ. Սֆայեան.

ԾԱՆՈՒՑԱԿԱՆՈՒՄ Է 1914 ԹՎԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՆՆԵՐ

«ՀՈՐԻԶՈՆ» (6-րդ տարի) հասարակական, գրական և քաղաքական օրաթերթ։ Տարեկան 8 ր., 6 ամիսը 4 ր., 1 ամիսը 80 կոպ.

Հասցէն՝ Тифлисъ редакція „Оризонъ“

«ԱՐԵՒ» գրական, հասարակական և քաղաքական օրաթերթ։ Տարեկան 7 ր., կէս տարին 4 ր., 1 ամիսը 1 ր։

Հասցէն՝ Баку, редакція «Аревъ» Торгов. 7

«ԹԱՏՐՈՆ և ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ» 4-րդ տարի թատերական-երաժշտական ամսագիր։ Տարեկան 1 ր. 50 կ., դուրսը 2.։

Հասցէն՝ Баку, Гимназическая 195, редакція «Татронъ-Ераждштутюнъ»:

«БАКУ» (13 годъ изданія) ежедневная, литературная, политическая и общественная газета. Въ Баку на годъ 7 р., 6 мѣсяц. 4 р., 1 мѣс. 1 р. Въ другіе города на годъ 8 р., 6 мѣс. 5 р. 1 мѣс. 1 р. 50 коп.

Адресъ: Баку, редакція «Баку»

«ՆՈՐ ՀՈՍԱՆԿ» (2-րդ տարի) գրական, գիտական, քաղաքական հասարակական ամսագիր։ Տարեկան 12 գիրք իւրաքանչիւրը ոչ պակաս 160 մեծ էջերից։ Բաժնեգինը 7 ր.

Հասցէն՝ Тифлисъ, редакція «Норъ Осанкъ»

«ԳԱՂՈՒԹ» գրական հասարակական, քաղաքական և տնտեսական շաբաթաթերթ։ Տարեկան 4 ր., կէս տարին 2 ր. 25 կոպ.

Հասցէն՝ Ростовъ-Донъ Дмитріевская 118

«ՊԱՏԱՆԻ» (5-րդ տարի) գրական, գեղարուեստական, քննադատական ամսանախի որը լոյս է տեսնում տարեկան 6 գիրք Թիֆլիսում տարեկան 1 ր. դուրսը 1 ր. 25 կոպ.

Հասցէն՝ Тифлисъ Ходживанкская 5.

М. Эрикянъ.

«ԼՈՒՍԱԴԷՄԻՆ» գրական ժողովածուներ լոյս են տեսնում 2 ամիսը մէկ անգամ։

Հասցէն՝ Баку, Магазинная ул. А. Алчуджіану «Լուսադէմին»-ի համար։

«ՆՈՐ ՈՒՂԻ» գրական ամսանախի (միամսեայ) տարեկան 1 ր. 25 կոպ.

Հասցէն՝ Александрополь, тип О. Г Саноянa

«ԼՈՅՍ» (5-րդ տարի) գրական, հասարակական շաբաթաթերթ։ Տարեկան 4 ր., կէս տարին 2 ր. 50 կոպ.

Հասցէն՝ Нахичевань на Дону, редакція «Луйсъ»

«ԽՈՍՔ» հասարակական, տնտեսական, գրական թերթ։ Տարեկան Երևանում 3 ր., կէս տարին 1 ր. 75 կ. » դուրսը 3 ր. 50 կ. կէս տարին 2 ր.

Հասցէն՝ Эривань Бебутовская 26 редакція «Хоскъ»

«ԳԱՂԱՌԻ ՁԱՅՆ» ժողովրդական լրագիր։ Տարեկան 3 ր. կէս տարին 2 ր.

Հասցէն՝ Александрополь редакція «Гавари Дзайнъ»